

Քաղաքական ուժերի հավասարակշռություն, ժողովրդավարություն և զարգացում.

Հայաստանը Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության կառույցում

Խաչիկ Տեր-Ղուկասյան

Համառոտագիր

1991 թվականից սկսած եվրասիական աշխարհաքաղաքական հարթակում ի հայտ են եկել երեք տարածաշրջանային անվտանգության կառույցներ՝ Սովետական Միության փլուզումից հետո՝ Եվրոպան, Կենտրոնական Ասիա և Հարավային Կովկասը: Վերը նշված կառույցները հիմնված են բարեկամական/թշնամական հարաբերությունների, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության կառույցների սկզբունքների վրա: Եվրասիայի նորաստեղծ տարածաշրջանային անվտանգության կառույցների ձևավորման հարցում օտարերկրյա ազդեցության ներթափանցման հետ մեկ տեղ առանցքային դեր է խաղացել պետականության կառուցման գործընթացը՝ ներառելով ազատ շուկայական տնտեսության ձևավորումը և կոմունիստական հասարակարգից անցումը՝ ժողովրդավարականի:

Երեք հարավ-կովկասյան ենկրների փոխազդեցությունների ուսումնասիրման համար օգտագործվել է տարածաշրջանային անվտանգության կառույցների (RSC) տեսությունը: Համաձայն հոդվածի, Հարավային Կովկասում գերիշխող են համարվում մրցակցության և թշնամության մոդելները: Մյուս կողմից, Հարավային Կովկասի տարածաշրջանում նկատվում է օտարերկրյա ուժերի ներթափանցում: Ըստ այդմ, Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգությունը հիմնականում կախված կլինի ուժային հավասարակշռությունից:

Ինչպե՞ս պետք է ապահովվի զարգացման գործընթացը քաղաքական ուժերի հավասարակշռության պայմաններում: Ինչպիսի՞ երկրներանքներ կան: Քաղաքական ուժերի հավասարակշռության պայմաններում ինչպիսի՞ն է ժողովրդավարության դերը զարգացման գործընթացի արագացման հարցում: Հոդվածը կանդրադառնա վերը նշված հարցերին՝ Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության կառույցների ենթատեքստում կենտրոնանալով Հայաստանի վրա: